

Զոր եւ բազմագուլթ, ողորմած եւ մարդասէրն Աստուած, որ տա՛յ ամենայնի առատագէս եւ ոչ նախատէ, ըստ Յակոբու առաքելոյ, այլ եւ լնու ամենեցուն զխախազն առաւել քան զոր խնդրեմք եւ իմանամք. որ 50 եւ ինքն իւր ամենասուրբ բերանովն հրամայեաց, թէ Զամենայն զոր ինչ խնդրէք ի անուն իմ, ի հօրէ տաց ձեզ: Եւ դարձեալ թէ Ամենայն որ խնդրէ անու եւ որ հայցէ գտանէ, եւ այլն: Նոյն անարգամեծար Տէրն, 55 որ ոչ դարչի ի մեղաւորաց, ոչ հայեցաւ յանօրէնութիւն իմ, այլ եւ ի անթիւ զազիր սղալանս իմ: Արդ յուաւ աղօթից իմոց եւ զխնդրուածս իմ ընկալաւ. եւ առաջնորդեաց ինձ ի շաւիղս ուղիղս. եւ ի ճանապարհս արգարութեան վասն անուան իւրոյ, ըստ անսուտ խոստման իւրոյ. որում փառք, սլատիւ եւ երկրպագութիւն, անդադար զոհացողական փառատրութեամբ յամենայն արարածոց նաեւ յիմ մեղապարտ յանձնէս, քանի եմ եւ 65 եղէց եւ մինչեւ ցելս շնչոյ իմոյ. ամէն:

2. ՈՒՂԵԻՌՐՈՒԹԻԻՆ Ի ԼՈՎԱՅ ՄԻՆՁԵԻ  
ՅԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Արդ ի թիլին Հայոց ՌԾԷ, Փետրուարի ԺԵ, աղուհացից յերկրորդում շաբաթի՝ օրն երկուշաբթի, կամօք եւ զօրութեամբ ամե-

51 յինքն յիւր: — 55 յանարգամեծար: — 62 յորում: — 66 եղեց: